ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2026թ. միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2026թ. 1-ին եռամսյակի զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		20.05.2026թ.
Ստյոպա Զաքինյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ֆինանսական տնօրեն		20.05.2026թ.
Արմեն Հակոբյան	Գլխավոր հաշվապահ		20.05.2026թ.

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

բաց բաժնետիրական ընկերություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

2026 ԹՎԱԿԱՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ակտիվները կազմել են **1,091 տրլն ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճելով **23,3 մլրդ ՀՀ դրամով** կամ **2,2%-ով**:

31.03.2026թ. դրությամբ Բանկի ակտիվների կառուցվածքում գերակշռում են հաճախորդներին տրամադրված վարկերը (ներառյալ ֆինանսական վարձակալությունը)՝ կազմելով ընդհանուր ակտիվների շուրջ **69.2%**-ը: Նախորդ տարվա տարեվերջի համեմատ համախառն վարկային պորտֆելն աճել է **1,5 մլրդ ՀՀ դրամով** կամ **2,5%**-ով՝ կազմելով **755,4 մլրդ ՀՀ դրամ**: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընդհանուր պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռը կազմել է **79,2%:**

31.03.2026թ. դրությամբ Բանկի դրամական միջոցները (կանխիկ միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում և այլ թղթակից բանկերում) կազմել են **79,8 մլրդ ՀՀ դրամ**՝ ապահովելով ընդհանուր ակտիվների **7,3%**-ը:

Բանկի պարտավորությունները նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճել են **15,7 մլրդ ՀՀ դրամով**՝ հասնելով **888,4 մլրդ ՀՀ դրամի:**

31.03.2026թ. դրությամբ Բանկի ավանդային պորտֆելը (ցպահանջ և ժամկետային) կազմել է **617,5 մլրդ ՀՀ դրամ**: Ընդ որում, ազգային արժույթով ներգրավված միջոցների կշիռն ընդհանուր ավանդային պորտֆելում կազմել է շուրջ **71.0%**: Ըստ ժամկետայնության կառուցվածքի՝ ժամկետային ավանդները զբաղեցնում են պորտֆելի **59,5%**-ը, իսկ ցպահանջ միջոցները՝ **40,5%**-ը:

Միևնույն ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի, Կառավարության, այլ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները 31.03.2026թ. դրությամբ կազմել են **182,9 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկի ընդհանուր կապիտալը 31.03.2026 դրությամբ կազմել է **202,5 մլրդ ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա համեմատ աճելով **7,6 մլրդ ՀՀ դրամով** կամ **3,9%-ով:**

Եկամուտների և ծախսերի հիմնական ցուցանիշներ

31.03.2026թ. դրությամբ Բանկի զուտ տոկոսային եկամուտները կազմել են **17,7 մլրդ ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ աճելով **17,9%**-ով:

Հաշվետու ժամանակահատվածում հաճախորդներին տրված վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով ստացված տոկոսային եկամուտը կազմել է **26,9 մլրդ ՀՀ դրամ**, իսկ ներդրումային գործառնություններից ստացված եկամուտը՝ **2,9 մլրդ ՀՀ դրամ**:

Միևնույն ժամանակ, միջնորդավճարների գծով եկամուտներն աճել են **17,9%**-ով և կազմել **4,7 մլրդ ՀՀ դրամ**: Առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտը կազմել է **0,9 մլրդ ՀՀ դրամ**: Արդյունքում, Բանկի զուտ գործառնական եկամուտները կազմել են **11,9 մլրդ ՀՀ դրամ:**

Բանկի ընդհանուր վարչական և այլ գործառնական ծախսերը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են **9,5 մլրդ ՀՀ դրամ**:

31.03.2026թ-ի դրությամբ աշխատակիցների թիվը հասել է **1915**-ի:

2026թ. առաջին եռամսյակի ընթացքում Բանկի կողմից իրականացված զուտ մասհանումները կազմել են **2,3 մլրդ ՀՀ դրամ**:

Արդյունքում, 2026թ առաջին եռամսյակի տվյալներով Բանկն ապահովել է **7,6 մլրդ ՀՀ դրամի** զուտ շահույթ: Ակտիվների շահութաբերության (ROA) ցուցանիշը կազմել է **2,8%**, իսկ սեփական կապիտալի շահութաբերությունը (ROE)՝ **15,3%,** Ծախսեր-եկամուտներ հարաբերակցության ցուցանիշը (Cost-to-Income) աճել է մինչև **44.4%:**

Մրցակցային դիրքի վերլուծություն

31.03.2026թ. դրությամբ ՀՀ բանկային համակարգում գործել են 17 առևտրային բանկեր՝ շուրջ **550** մասնաճյուղերով և **17,000** աշխատակիցներով:

2026թ. առաջին եռամսյակի ընթացքում համակարգում արձանագրվել է ակտիվների **2,5%**, վարկային պորտֆելի **4,1%**, պարտավորությունների **2,2%** և կապիտալի **5,6%** աճ:

Նույն ժամանակահատվածում Բանկն ապահովել է ակտիվների **2,2%** և վարկային պորտֆելի **2,5%** աճ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն նվազել են **0,7%**-ով, իսկ կապիտալը՝ **3,9%**-ով: Տարեվերջի դրությամբ Բանկի շուկայական մասնաբաժինն ըստ ակտիվների կազմել է **8,3%**, ըստ վարկերի՝ **9,4%**, իսկ ըստ ավանդների՝ **8,2%**: Նշված բոլոր ցուցանիշների (բացառությամբ կապիտալի) , ինչպես նաև շահութաբերության գծով Բանկը եղել է Հայաստանի առաջատար բանկերի եռյակում:

Հիմնական մրցակցային առավելությունները

- **Կապիտալիզացիայի բարձր մակարդակ.** 31.03.2026թ. դրությամբ Բանկի կապիտալն աճել է **7,6 մլրդ ՀՀ դրամով**՝ կազմելով **202,5 մլրդ ՀՀ դրամ** (4-րդ տեղը համակարգում): Բանկի առաջին մակարդակի և ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 19,4% և 22,0%, ինչը զգալիորեն գերազանցում է շուկայի միջին ցուցանիշները:
- **Առաջատար դիրք գյուղատնտեսական ֆինանսավորման շուկայում.** Բանկը շարունակում է հանդիսանալ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի

խոշորագույն ֆինանսավորողներից մեկը՝ պահպանելով խոշոր մասնաբաժին շուկայում: Շնորհիվ տասնամյակների փորձառության և պետական սուբսիդավորման ծրագրերի արդյունավետ իրացման՝ Բանկն ունի գյուղատնտեսական ռիսկերի գնահատման և կառավարման եզակի գործիքակազմ, որն ապահովում է պորտֆելի կայունությունն ու շարունակական աճը:

- **Ամենաընդգրկուն մասնաճյուղային ցանցերից մեկը.** 31.03.2026թ. դրությամբ Բանկն ունի Հայաստանի ողջ տարածքում սփռված առավել լայն և աշխարհագրորեն դիվերսիֆիկացված մասնաճյուղային ցանցերից մեկը (66 մասնաճյուղ, որոնցից 2/3-ը՝ մարզերում): Սա հնարավորություն է տալիս ապահովել ունիվերսալ բանկային ծառայությունների հասանելիությունը նաև հեռավոր մարզային համայնքներում՝ ամրապնդելով հաճախորդների հետ անմիջական կապը և ապահովելով մրցակցային առավելություն ֆիզիկական սպասարկման շուկայում:
- **Թվային էկոհամակարգի և տեխնոլոգիական լուծումների զարգացում.** Ռազմավարական կարևորություն ունեցող «acba digital» համակարգի շարունակական կատարելագործումը թույլ է տվել Բանկին զգալիորեն բարձրացնել հեռահար սպասարկման տեսակարար կշիռը: Թվային գործիքների և բիզնես գործընթացների ավտոմատացման շնորհիվ Բանկն ապահովում է հաճախորդների փորձառության բարելավում և գործառնական արդյունավետության բարձրացում՝ արագ արձագանքելով շուկայի ժամանակակից պահանջներին:
- **ՓՄՁ հատվածի զարգացում և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցում.** Բանկը Փոքր և միջին ձեռնարկատիրության հատվածի համար հանդես է գալիս որպես ռազմավարական գործընկեր՝ առաջարկելով ոչ միայն ֆինանսական լուծումներ, այլ նաև բիզնեսի զարգացմանն ուղղված կրթական ծրագրեր: «Acba Business Club»-ի միջոցով իրականացվող անվճար դասընթացները նպաստում են հաճախորդների գործարար հմտությունների զարգացմանը՝ միաժամանակ բարձրացնելով հաճախորդների լոյալության մակարդակն ու վարկային պորտֆելի որակը:

- **ESG սկզբունքների ներդրում և «Կանաչ» ֆինանսավորման առաջնահերթություն.** Բանկն ակտիվորեն ներդնում է բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ESG) միջազգային ստանդարտները: Միջազգային ֆինանսական կառույցների (EBRD, KfW, GGF և այլն) հետ հաստատված երկարամյա համագործակցությունը թույլ է տալիս ներգրավել նպատակային միջոցներ էներգաարդյունավետության և կայուն գյուղատնտեսության զարգացման ծրագրերի համար՝ Բանկը դիրքավորելով որպես առաջատար «կանաչ» ֆինանսավորման ոլորտում:
- **Թափանցիկության բարձր մակարդակ և հանրային ընկերության կարգավիճակ.** Որպես Հայաստանում առաջիններից մեկը IPO իրականացրած բաց բաժնետիրական ընկերություն՝ Բանկն ապահովում է թափանցիկության և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը: Բաժնետերերի լայն շրջանակը (այդ թվում միջազգային ինստիտուցիոնալ գործընկերոջ ներկայությունը) և միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվետվողականությունը հիմք են հանդիսանում ներդրողների վստահության և Բանկի բարձր հեղինակության համար թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում:

Միջազգային վարկանիշներ

2025 թվականի ընթացքում Բանկի ֆինանսական կայունությունն ու վարկունակությունը վերահաստատվել են աշխարհի առաջատար վարկանիշային գործակալությունների կողմից.

- **Moody's Investors Service.** Գործակալությունը Բանկին շնորհել է **«Ba3»** երկարաժամկետ վարկանիշ (Long-term deposit rating)՝ **«Կայուն»** (Stable) հեռանկարով: Այս վարկանիշն արտացոլում է Բանկի ամուր դիրքերը հայաստանյան շուկայում, կապիտալիզացիայի բարձր մակարդակը և իրացվելիության բավարար պաշարները:

- **Fitch Ratings.** 2025 թվականի փետրվարին գործակալությունը վերահաստատել է Բանկի էմիտենտի դեֆոլտի երկարաժամկետ վարկանիշը (Long-Term IDR) **«BB-»** մակարդակում, ինչպես նաև կենսունակության վարկանիշը (Viability Rating)՝ **«bb-»** մակարդակում: Վարկանիշների հեռանկարը գնահատվել է որպես **«Կայուն»:**

<u>Հետագա զարգացման նկարագիր</u>

Առաջիկա տարիներին Բանկը շարունակելու է իր գործունեությունը մանրածախ, գյուղատնտեսական, ՓՄՁ և կորպորատիվ ուղղություններով՝ հիմնվելով հաճախորդակենտրոն, տվյալահեն և նորարար մոտեցումների վրա: Բանկի գործունեությունն ուղղված է լինելու ինչպես մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, թվային կարողությունների զարգացմանը, ծախսերի կրճատմանն ու ֆինանսական արդյունքների ամրապնդմանը, այնպես էլ սպասարկման որակի և հաճախորդների հավատարմության բարձրացմանը: Բանկը հանձնառու է պահպանել ամուր ներկայություն հաճախորդների բոլոր սեգմենտներում՝ կենտրոնանալով հաճախորդների ներգրավվածության խորացման, շահութաբերության բարձրացման և թվային բանկինգում իր առաջատար դիրքերի ամրապնդման վրա: Այսպես, Բանկը նախատեսում է հաճախորդների թիրախային ներգրավում՝ առաջարկելով անհատականացված սպասարկում, բացառիկ առաջարկներ և թվային (digital-first) լուծումներ: Զուգահեռաբար, շարունակվելու է թվային հարթակների կատարելագործումը և ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնումը՝ նպատակ ունենալով ապահովել արագ, հարմարավետ, անվտանգ և նորարար ծառայություններ: Ներդրվելու են առաջադեմ տվյալահեն և վերլուծական գործիքներ, ինչպես նաև անձնական ֆինանսների վերլուծական և կառավարման նոր հնարավորություններ, ինչը կապահովի առավել ամբողջական, նպատակային և անհատականացված փորձառություն բոլոր սեգմենտների համար:

Վարկային ներդրումները կշարունակեն հանդիսանալ Բանկի գործունեության առանցքային բաղադրիչներից՝ նպաստելով տնտեսության տարբեր ոլորտների կայուն զարգացմանը: Այսպես Բանկը շարունակելու է վարկավորման ընդլայնում Հայաստանի ողջ տարածքում՝ ապահովելով տարբեր սեգմենտների համար ֆինանսական միջոցների առավել հասանելիություն: Վարկավորման ոլորտում շարունակվելու են գործընթացների ավտոմատացման, կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ գործունեությունը՝ հնարավորինս կրճատելով վերջիններիս գծով կատարվող գործառնական ծախսերը և ավելացնելով եկամտաբերությունը: Զուգահեռաբար, զգալիորեն կընդլայնվեն լիովին առցանց վարկավորման հնարավորությունները՝ ինչպես ֆիզիկական այնպես էլ իրավաբանական անձանց համար: Բանկը նախատեսում է ներդնել նոր վարկային պրոդուկտներ և նպատակային առաջարկներ՝ հարմարեցված տարբեր սեգմենտների առանձնահատկություններին՝ ապահովելով ավելի ճկուն և մրցունակ ֆինանսական լուծումներ:

Միևնույն ժամանակ, Բանկի զարգացման կարևորագույն ուղղություններից է կայուն և դիվերսիֆիկացված ռեսուրսային բազայի ընդլայնումը: Այդ նպատակով Բանկը կշարունակի է ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավումը ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Որպես խնայողական այլընտրանքային գործիք և կապիտալի շուկայի զարգացման կարևոր նախաձեռնություն՝ Բանկը կշարունակի դրամային և արտարժութային պարտատոմսերի ակտիվ թողարկումը՝ ընդլայնելով հաճախորդների ներդրումային հնարավորությունները:

Ֆինանսական համակարգի գլոբալ տրանսֆորմացիոն միտումներին համահունչ՝ Բանկի ռազմավարական օրակարգում առանցքային տեղ են զբաղեցնում թվային փոխակերպմանը միտված շարունակական գործընթացները, նորարարական տեխնոլոգիաների կիրառումը և գործառնական արդյունավետության բարձրացումը:

Հաճախորդների վարքագծի փոփոխությունն ու տեխնոլոգիական արագ զարգացումը Բանկից պահանջում են ճկուն և առաջադեմ լուծումներ: Այս համատեքստում Բանկը

շարունակելու է ներդնել **ավտոմատացման և ռոբոտացման(RPA)** ժամանակակից գործիքակազմ՝ նպատակ ունենալով օպտիմալացնել ծախսերը, նվազեցնել մարդկային գործոնի հետ կապված ռիսկերը և բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Զուգահեռաբար, արհեստական բանականության (AI) և մեքենայական ուսուցման (ML) կիրառումը հնարավորություն կտա Բանկին արդյունավետ որոշումներ կայացնել իրական ժամանակում՝ ապահովելով հաճախորդների կարիքների խորացված վերլուծություն և ավելի անհատականացված սպասարկում:

Բանկի թվային փոխակերպման ռազմավարության հիմքում է acba digital հարթակի զարգացումը, որպես երկարաժամկետ արժեք ստեղծող առանցքային ուղղություն: Բանկի նպատակն է ձևավորել թվային էկոհամակարգ, որտեղ հաճախորդները հնարավորություն կունենան մեկ հավելվածի միջոցով օգտվել իրենց կյանքի տարբեր փուլերին համապատասխան ֆինանսական և ոչ ֆինանսական ծառայություններից: Այսպես, Բանկը շարունակելու է ընդլայնել թվային հարթակներում իր առաջարկների ամբողջականությունը՝ համալրելով վարկային, վճարային, քարտային, ապահովագրական և ոչ ֆինանսական ծառայությունները ժամանակակից լուծումներով: Ինչպես նաև շարունակվելու են թվային օնբորդինգի հնարավորության ընդլայնումը՝ հատկապես երիտասարդ սերնդի, ինչպես նաև ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների համար: Միաժամանակ, ներդրվելու են առաջադեմ վերլուծական գործիքներ օգտատիրոջ փորձառության, անհատականացված մոտեցման և ներգրավվածության բարձրացման ուղղությամբ, որոնք կապահովեն ավելի հարմարավետ, անխափան և բարելավված հաճախորդի փորձառություն:

Թվային լուծումների ակտիվ ներդրմանը զուգահեռ՝ Բանկը առաջնահերթություն է տալիս կիբեռանվտանգությանը և տվյալների պաշտպանությանը: Բանկը որդեգրել է կանխարգելիչ և համապարփակ մոտեցում՝ ներդնելով ժամանակակից պաշտպանական համակարգեր, ինչպես նաև բարձրացնելով աշխատակիցների և հաճախորդների

իրազեկվածությունն ու կիբեռհիգիենայի մակարդակը: Այս մոտեցումը նպատակ ունի ապահովել անվտանգ, վստահելի և կայուն թվային միջավայր բոլորի համար:

Միաժամանակ, կզարգանա Բանկի սպասարկման էկոհամակարգը՝ հիմնվելով ավելի հարմարավետ, ճկուն և հաճախորդակենտրոն մոդելների վրա: Մասնաճյուղերում կհամադրվեն անհատական խորհրդատվությունն ու աշխատակիցների բազմաֆունկցիոնալությունը, ինքնասպասարկման և թվային աջակցության հետ՝ ապահովելով ավելի համապարփակ ու որակյալ սպասարկում բոլոր թիրախային սեգմենտների համար: Բանկը շարունակելու է նաև բարելավել հեռահար սպասարկման ուղիներն ու ենթակառուցվածքները՝ ապահովելով արագ, հետևողական և բարձրակարգ աջակցություն: Այս մոտեցումները հնարավորություն կտան բարձրացնել մասնաճյուղերի դերը՝ դրանք դարձնելով ավելի արդյունավետ համապարփակ խորհրդատվական կենտրոնների:

Բանկի զարգացման կարևոր բաղադրիչ է նաև կանաչ բանկինգի և Բնապահպանական, Սոցիալական և Կառավարման (ԲՍԿ) սկզբունքների հետևողական ինտեգրումը: Բանկի ԲՍԿ ռազմավարությունը առաջնորդվում է «Նպաստել Հայաստանի կայուն զարգացմանը» տեսլականով և հիմնված է այն սկզբունքի վրա, որ երկարաժամկետ բիզնեսի հաջողությունը պետք է համահունչ լինի շրջակա միջավայրի պահպանությանը, սոցիալական առաջընթացին և թափանցիկ կառավարմանը: Առաջիկա ժամանակահատվածում Բանկը կենտրոնանալու է իր հիմնական չորս՝ կլիմայի փոփոխության մեղմացում, ջրային ռեսուրսների կառավարում, աշխատավայրի բարեկեցություն ու աշխատանքային չափորոշիչներ, ինչպես նաև կառավարում և հանրային վստահություն ոլորտներում՝ պարտավորությունների առաջխաղացման վրա: Առաջիկա ժամանակահատվածում Բանկը կենտրոնանալու է կլիմայական ռիսկերի կառավարման, կանաչ վարկավորման և կանաչ պարտատոմսերի գործիքների ներդրման վրա՝ նպաստելով տնտեսության և հասարակության երկարաժամկետ ու կայուն զարգացմանը:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2026 թվականի առաջին եռամսյակում ՀՀ տնտեսական միջավայրը շարունակել է գտնվել նախորդ տարվանից փոխանցված անորոշությունների ազդեցության ներքո: Վերջիններս պայմանավորված էին տարածաշրջանային ռազմաքաղաքական լարվածությամբ և առանցքային առևտրային գործընկերների հետ տնտեսական համագործակցության ծավալների նվազման միտումներով: Արտաքին առևտրի թուլացումը և Մերձավոր Արևելքում (մասնավորապես՝ Իրանի շուրջ) հնարավոր զարգացումների բարձր անորոշությունը հավելյալ ռիսկեր են ստեղծել մակրոտնտեսական կայունության համար:

Արտաքին հատված և դրամական փոխանցումներ

Ըստ ՀՀ ՎԿ-ի՝ 2026թ-ի հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ արտաքին եւ փոխադարձ առեւտրի առևտրաշրջանառության ծավալը աճել է 4.6%-ով, ինչի մեջ իր նշանակալի ազդեցությունն է ունեցել ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառության ծավալի ավելի քան 17.2 տոկոս նվազումը:

Տնտեսական ակտիվություն և գնաճ.

Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ 2026 թվականի հունվար-մարտ ամիսներին ֆիզիկական անձանց կողմից ՀՀ բանկերի միջոցով ՌԴ-ից ստացված և ՌԴ փոխանցված դրամական փոխանցումների զուտ ներհոսքը դոլարային արտահայտությամբ աճել է շուրջ 22.3 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2026 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի նկատմամբ ՀՀ ՏԱՑ-ը գրանցել է 7.1% աճ, իսկ ծառայությունների և շինարարության ծավալները աճել են համապատասխանաբար 7.4%-ով և 22.2%-ով: Ի թիվս

վերոնշյալների՝ տարեկան աճ է գրանցել նաև տնտեսությունում առևտրի շրջանառության ծավալը՝ 2.1%:

2026թ. առաջին եռամսյակում պահպանվել է հարաբերականորեն կայուն գնաճային միջավայր և 12-ամսյա գնաճը կազմել է 5.3% (Ապրիլ 2026):

Տնտեսական հեռանկար.
Ըստ Economist Intelligence Unit (EIU) կանխատեսումների՝ առաջիկա երեք տարիներին ՀՀ ՀՆԱ-ի իրական աճը կպահպանվի կայուն տիրույթում՝ կազմելով համապատասխանաբար 5%, 4.6% և 4.3%*:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2026թ. առաջին եռամսյակում Բանկը գործել է սահմանված ռիսկի ախորժակի սահմաններում: Կապիտալի համարժեքության նորմատիվի փաստացի արժեքը գերազանցել է ինչպես ներքին, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմը: Բանկի ռիսկով կշռված ակտիվների գերակշիռ մասի աղբյուր է հանդիսանում վարկային ռիսկը, ինչը պայմանավորված է գործունեության հիմնական ուղղվածությամբ:

Բանկի չաշխատող ակտիվների ցուցանիշը 2026թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 0.68 տոկոս՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի վերջի ցուցանիշի նկատմամբ նվազելով 0.26 տոկոսային կետով: Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումների մակարդակը՝ ըստ տնտեսության ճյուղերի և խոշորագույն հաճախորդների, գտնվել է սահմանված նպատակակետերի շրջանակներում: 2026թ. առաջին եռամսյակի վերջին իրականացված սթրես թեստերի արդյունքներով վարկային ռիսկի մեծությունը գտնվել է ընդունելի մակարդակում՝ հաշվի առնելով սթրեսային իրավիճակի հնարավոր ազդեցության և վերջինիս ի հայտ գալու հավանականության համադրությունը:

Economic Intelligence Unit (EIU) One-Click Report Armenia, April 28th, 2026

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկի շուկայական ռիսկի հիմնական աղբյուրներն են արտարժութային փոխարժեքների և տոկոսադրույքների տատանողականությունը:

2026թ. առաջին եռամսյակի ընթացքում, ԿԲ-ի կողմից սահմանվող Վերաֆինանսավորման տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ կազմելով 6.5%:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը դրսևորել է ցածր տատանողականություն, իսկ Եվրո/ՀՀ դրամ և ՌԴ ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքները ունեցել է առավել բարձր տատանողականություն՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ և միջազգային ֆինանսական շուկաներում դոլարի փոխարժեքի նկատմամբ եվրոյի արժույթի ուժեղացմամբ:

Արտարժութային ռիսկի պահպանողական քաղաքականությունից ելնելով՝ եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթների գծով էական բաց դիրքեր չեն պահվել: ԱՄՆ դոլարով արտահայտված դիրքը հիմնականում եղել է կարճ, սակայն գտնվել է Բանկի կողմից ընդունելի մակարդակում:

2026թ. առաջին եռամսյակի ընթացքում արտարժույթի վերագնահատումից Բանկը կորուստներ չի կրել: Պարբերաբար իրականացվող սթրեսային սցենարների արդյունքում արտարժույթի վերագնահատումից հնարավոր կորուստները չեն գերազանցել սահմանված ռիսկի ախորժակի մեծությունները:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2026թ. առաջին եռամսյակի ընթացքում Բանկը պահպանել է իրացվելիության բարձր և հուսալի մակարդակ, ինչն արտացոլվում է իրացվելիության նորմատիվների՝ ՀՀ ԿԲ սահմանած սահմանաչափերից զգալիորեն բարձր ցուցանիշով: Նույնիսկ արտաքին միջավայրից եկող անորոշությունների պարագայում Բանկի ավանդային պորտֆելի գծով

բացասական միտումներ չեն դիտվել: Հարկ է նշել, որ ընդհանուր պարտավորությունների կազմում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը կազմում է 63.43%:

Իրացվելիության աղբյուրների դիվերսիֆիկացման նկատառումներից ելնելով՝ Բանկը միջոցներ է ներգրավվում նաև միջազգային ֆինանսական կառույցներից, ինչպիսիք են ՎԶԵԲ, Proparco, Symbiotics, Triodos, EFSE և այլն:

Ավելցուկային իրացվելիության պաշարներն ուղղվում են ցածր ռիսկային ներդրումային գործառնությունների իրականացմանը, մասնավորապես՝ պետական պարտատոմսերում ներդրումների իրականացում, միջբանկային վարկերի տրամադրում, հակադարձ ռեպո գործարքների իրականացում և այլն: Բանկի ներդրումային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են կազմում առավել բարձր իրացվելիություն ունեցող ՀՀ պետական պարտատոմսերը՝ կազմելով պարտատոմսերի պորտֆելի մոտ 97.04%:

Համաձայն Բանկի իրացվելիության սթրես թեստերի արդյունքների՝ Բանկի իրացվելիության մակարդակը գնահատվել է բավարար:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Բանկի վարկային քաղաքականության հիմքում դրված է շրջակա միջավայրի և սոցիալական պատասխանատվության հայեցակարգը, որի շրջանակներում արգելվում է շրջակա միջավայրի վրա չափազանց բարձր ազդեցություն ունեցող գործունեության և նախագծերի ֆինանավորումը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից են Գործառնական ռիսկի միջադեպերի

կառավարման գործուն մեխանիզմները և մշտական հսկողության համակարգի առկայությունը:

2021թ.-ից իրականացվում է Բանկի բոլոր գործընթացների վերլուծություն՝ ուղղված պոտենցիալ ռիսկերի բացահայտմանը: Պարբերաբար իրականացվում է Գործառնական ռիսկերի քարտեզի վերանայում՝ հիմնված նոր գործընթացների և գործընթացներում իրականացվող փոփոխությունների ուսումնասիրության, ռիսկերի բացահայտման վրա:

2022թ.-ից ստեղծվել և վարվում է գործառնական միջադեպերի բազա, որը հնարավորություն է տալիս արդյունավետորեն վերլուծել, գնահատել և բացահայտել առավել ռիսկային գործընթացները, վաղաժամ ահազանգեր ստանալ գործառնական ռիսկի միջադեպերի գծով, բարելավել ռիսկի զսպման մեխանիզմները և առավել թիրախային դարձնել մշտական հսկողության համակարգը: Ինչպես նաև Գործառնական միջադեպերի բազայում ներառված փաստացի պատահարների/միջադեպերի հիման վրա վերանայվում են նաև գործառնական ռիսկերի քարտեզում ներառված ռիսկերը, դրանց գնահատականները, և վերահսկողական գործիքակազմերը: Բանկում մշակվող հսկողական գործառույթների ավտոմատացման և հաշվետվական համակարգը նպատակ ունի բարձրացնել հսկողության արդյունավետությունը, կրճատել աշխատատարությունը և նպաստել պոտենցիալ գործառնական ռիսկերի վաղաժամ հայտնաբերմանը ու կանխարգելմանը:

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության հետ առնչվող ռիսկերի արդյունավետ կառավարումը հանդիսանում է Բանկի առանցքային բաղադրիչներից մեկը: Կիբեռսպառնալիքների շարունակական աճի, թվային տեխնոլոգիաների զարգացման և բանկային ծառայությունների թվայնացման պայմաններում Բանկը հետևողականորեն իրականացնում է տեղեկատվական համակարգերի, ծառայությունների և բիզնես գործընթացների անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված ռազմավարական և գործառնական միջոցառումներ՝ ներդնելով ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ և կիրառելով տեղեկատվական անվտանգության ու

կիբեռանվտանգության միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համապատասխան վերահսկողական մեխանիզմներ:

Բանկի տեղեկատվական համակարգերի անվտանգության շարունակական բարձր մակարդակն ապահովելու, ինչպես նաև կիբեռմիջադեպերի հավանականության և ազդեցության նվազեցման նպատակով Բանկում ներդրված է կիբեռանվտանգության բազմաշերտ պաշտպանության (Defence in Depth) մոդել: Իրականացվում են տեղեկատվական ակտիվների շարունակական մոնիթորինգ, անվտանգության իրադարձությունների վերլուծություն, խոցելիությունների գնահատումներ, ներթափանցման թեստավորումներ, ինչպես նաև աշխատակիցների իրազեկվածության բարձրացման ծրագրեր: Միաժամանակ, առավել համապարփակ անվտանգության ապահովման նպատակով Բանկը համագործակցում է միջազգային առաջատար կազմակերպությունների հետ՝ իրականացնելով պարբերական ներթափանցման թեստավորումներ, և առաջադեմ մշտական սպառնալիքի (APT) սցենարների մոդելավորում: Նման մոտեցումը նպաստում է Բանկի տեղեկատվական համակարգերի դիմադրողականության բարձրացմանը և կիբեռանվտանգության ռիսկերի նվազեցմանը:

Բանկում գործում են ISO/IEC 27001:2022 տեղեկատվական անվտանգության կառավարման և ISO/IEC 27701:2019 անձնական տվյալների գաղտնիության կառավարման միջազգային ստանդարտներին համապատասխան հավաստագրված կառավարման համակարգեր, որոնց համապատասխանությունը պարբերաբար վերահաստատվում է ամենամյա վերահսկողական աուդիտների և վերահավաստագրման գործընթացների միջոցով: Բացի այդ, քարտային տվյալների պաշտպանության և վճարային համակարգերի անվտանգության ապահովման նպատակով Բանկը հավաստագրված է PCI DSS (Payment Card Industry Data Security Standard) միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:

Բանկը շարունակաբար վերանայում և կատարելագործում է իր կիբեռանվտանգության վերահսկողական միջավայրը՝ հաշվի առնելով կիբեռսպառնալիքների միտումները, կարգավորող պահանջները և միջազգային լավագույն փորձը:

Կիբեռանվտանգության ռիսկերի կառավարման հիմնական նպատակն է ոչ միայն նվազեցնել հնարավոր տեղեկատվական, ֆինանսական և հեղինակային կորուստները, այլ նաև ապահովել հաճախորդների վստահությունը, բանկային ծառայությունների կայունությունն ու Բանկի ռազմավարական նպատակների անխափան իրականացումը: